ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՎԻՀՄԱՊՁԲ 19/9

ք. Վանաձոր 22. 11. 2019թ.

«Վանաձորի Ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ն (այսուհետ՝ Գնորդ), ի դեմս տնօրեն Ն.Դ.Էվինյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից,և «Արմենֆարմ» ՍՊԸ-ն, (այսուհետ՝ Վաճառող), ի դեմս տնօրեն Լ. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով սահմանված պայմաններով Մատակարարը Գնորդին կմատակարարի հավելված 1-ում նշված ապրանքները):

2. Մատակարարման պայմաններ

2.1 Մատակարարն Ապրանքը հասցնում է գնորդին:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Մատակարարն իրավունք ունի.
Գնորդի կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետում ապրանքները չընդունելու դեպքում հրաժարվել պայմանագրը կատարելուց և Գնորդից պահանջել վճարելու վնասների փոխհատուցում:

3.2 Մատակարարը պարտավոր է.

3.2.1 Գնորդին հանձնել պատշաճ տեսականու, քանակի և որակի ապրանք:

3.2.2 Գնորդին ապահովել համապատասխան տեղեկատվությամբ և նոր գնացուցակներով:

3.3 Գնորդն իրավունք ունի.

3.3.1 Մատակարարի կողմից անպատշաճ որակի կամ քանակի ապրանք մատակարարելու դեպքում պահանջել փոխարինել պատշաճ որակի կամ քանակի ապրանքով կամ հետ վերցնել ապրանքը:

3.4 Գնորդը պարտավոր է.

3.4.1 Ընդունել իր պատվերի համաձայն մատակարարված ապրանքը:

3.4.2 Ապրանքի վերաբերյալ իր առարկությունները դրանք ստանալուց հետո հեռախոսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով 24 ժամվա և գրավոր ձևով 72 ժամվա ընթացքում ներկայացնել Մատակարարին:

3.4.3 Ժամանակին և ամբողջությամբ վճարել Մատակարարից ստացված ապրանքի դիմաց:

4. Հանձնում և ընդունում

4.1 Ապրանքը գնորդին կմատակարարվի (կհանձնվի) Գնորդի գտնվելու, կամ նրա կողմից նշված վայրում(հասցեն՝ ք. Վանաձոր, Պ. Սևակի 51):

4.2 Մատակարարված ապրանքը գնորդի կողմից կընդունվի միայն նրա ներկայացուցչի կողմից դրա զննումն իրականացնելուց հետո:

4.3 Մատակարարված Ապրանքի զննման ընթացքում պետք է ստուգվի և պարզվի Ապրանքի տեսականու, քանակի և որակի համապատասխանությունը Գնորդի պատվերին:

5. Հաշվարկների կարգը և ձևը

5.1 Մատակարարված Ապրանքների դիմաց Գնորդը վճարումներն իրականացնում է Մատակարարի կողմից ապրանքի հետ ներկայացվող հաշիվ-ապրանքագրերի հիման վրա, Ապրանքը ստանալու օրվանից՝ 15 օրվա ընթացքում:

5.2 Սույն պայմանագրի 5.1 կետում նշված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա վճարումները Գնորդը իրականացնում է անմիջապես Մատակարարին անկանխիկ ձևով:

5.2.1 Գնորդի կողմից Ապրանքի դիմաց վճարն ուշացնելու դեպքում ,Մատակարարը իրավունք ունի կիրառել տույժ՝ ուշացած յուրաքանչյուր օրվա չվճարված գումարի 0.05% չափով: